

Truistepetley L.
Lynch Appropiate
January 1883 y. line paper
14-pl.

Ln

749

1999

ՀՐԴԵՀ


ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎԱՆԱՑ

1885 ՏԱՐԻՈՅՆ ՅՈՒԼԻՍԻ 14ԻՆ

ՆԿԱՐԱԳՐԵԱԼ

Ի Հ. ՅԱԿ. Վ. ԻՍԱԿԵՐՏԵՆՑ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒՅՏԷՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

1884

Ltn

749



22355



ՀՐԴԵՀ

ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՄԵՆԱՍՏԱՆԻՆ ՎԵՆԵՏԿՈՑ



ՀՐԴԵՀ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎԱՆԱՅ

1883 ՏԱՐԻՈՅՆ ՅՈՒՂԻՍԻ 14ԻՆ

ՆԿԱՐԱԳՐԵԱԼ

Ի Հ. ՅԱԿՈԲ Վ. ԻՍԱՎԵՐՏԵՆՑ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ

1884

Ա.

Մխիթարեան Ուխտին յիշատակարանաց մէջ, 1883 տարւոյն Յուլիսի 14ին գիշերն՝ աղետալի ցաւոյ յիշատակ պիտոր մնայ: Շաբաթ գիշեր էր և Վենետիկեան հնաւանդ տօնախմբութեան մը տարեդարձ, որ տարուէ տարի ողջոյն քաղաքը և անոր շրջակայից զբօսասէրքը՝ մեծ շարժման մէջ կը դնէ:

Ջերմ, խղզուկ, անհանդուրժելի տօթոյ ցօրեկը՝ երեկոյեան մութին որ տեղիք կու տար, մեղմ քամի մը հարաւէն շնչելով քիչ մը զով կը տիրէր այն ընդարձակածաւալ լճակին վրայ: Աշխատութենէ և աւելի ջերմութենէ խոնջ հանգստեան առանձնարանս կը փութայի. ժաւ մը երեկոյեան գրեթէ ինն էր: Առ վայր մը պատուհանի մը առջին կը դադարիմ, ուսկից տեսարանը հեռու հեռու կը ձգի մինչև ծառազարդ կղզեկաց սահմանը: Այն լճակին խաղաղաւէտ երեսին վրայէն, հարիւրաւոր սրարշաւ

29-750

7 749-60

կոնտրալսյք, գունազոյն կանթեղօք զարդարեալ, քաղաքէն դէպ 'ի Լիտոյ կղզին՝ Ադրիականին ծովափը՝ կը դիմեն: Հոն՝ այն հուշակաւոր ծովային բաղանեաց զբօսալսյրը՝ հազարաւոր մարդոց լազմութիւնը՝ կերութեամբ, երաժշտութեամբ, թատերգութեամբ ու պարով՝ ողջոյն գիշերը յանգ պիտոր հանեն: Արդէն կղզւոյն երեսը լուսոյ մէջ ընկղմած կ'երևի. լուսաւորութեան անհամար կանթեղաց լոյսը անդորր ջրին վրայէն անդրադառնալով՝ կեդրոն վայրը հնոց մը կը նմանցընեն. մինչդեռ պարտիկաց ծառոց ետեւէն մերթ ընդ մերթ հրախաղութեանց փայլատակունք կը հատանին: Մարդոց աղաղակը, կառաց աղմուկը, երաժշտութեան շառաչը՝ միանգամայն իրարու խառնուելով՝ այն վայրը կը վրդովեն: Որչափ ուրախութիւն, որչափ յոյս, որչափ երջանկութեան զգացմամբ արդեօք այն երիտասարդ ամբօխին սիրտը կը բարբխէ:

Այլ եւս բարեբաղդազոյն կը համարիմ զիս առանձնութեանս հանգիստը ամբիփոխելու, և ողջոյն ախարհիս բարի զուարճութիւն կը մաղթեմ: Թմրութիւնը չի յապաղեր անզգայութեան մէջ զիս ձգելու. և թուի թէ այն վիճակը մտեր էի՝ որ ոչ արթնութիւն է և ոչ խորին քուն. և ահա մերձաւոր աղաղակաց շփոթը կը սկսի աւանջս խայթել. ուրախութեան թէ սպառնալեաց ու երկիւղի ձայնք էին, չէի կարող ըմբռնել. բայց կը համարէի թէ մերձաւորքս 'ի հեռուստ խնդակից կ'ըլլային զբօսասիրաց: Բայց

և այնպէս շփոթ գաղափարքս չէի կարող հաշտեցնել. ինձ անպատշաճ կը թուէին այն ձայնք և հակառակ բարեկարգութեան:

Թուի թէ ըստ բաւականի երկայն տևեցին այս թմրութեան խորհրդածութիւնք, առ սակաւ սակաւ անզգայութիւնս թեթեցնելով. երբ յանկարծ ամուր մը ցնցուեցայ ու սարսափով վեր նետուեցայ. սիրտս ամուր մը կը բարախէր: Արտաքուստ ձայնք կը սաստկանային, և որ չարագուշակն էր՝ աւելի աղմկի ու երկիւղի կը թուէին քան թէ ուրախութեան: Դէպ 'ի պատահան կը նետուիմ ու գլուխս դէպ 'ի հարաւ կ'երկնցնեմ. չէնքը լուսաւորուած կ'երևնայ. արդեօք ձախորդութիւն մըն է. սիրտս յուսոյ ու երկիւղի մէջ կը վարանի: Դէպ 'ի դուռ կը վազեմ՝ ստուգութիւնը փնտռելով. Տէր Աստուած, ի՞նչ ահաւոր տեսարան. սենեկէս երեսուն չափ անդին ողջոյն սրահը բոցերու մէջ է: Մի և նոյն ատեն տխուր զանգակի մը ողբական ձայնը սրտիս վրայ լքում կը բերէ: Այլ տարակոյս չկար. ահաւոր հրդեհի մը հարուածը Մխիթարաց ձեռագործ դարական տունը բնաջինջ ընելու կը սպառնար:

Բ

Թէ ուստի կամ ի՞նչ պատճառէ կրակը ծագած ըլլայ՝ մշտնջենաւոր գաղտնիք մը պիտոր մնայ. որովհետեւ այնպիսի տեղ սկիզբն ըրաւ,

ուր ամենեւին յաճախութիւն չկար, և եթէ երբեք մէկը մերձենար այն տեղոյն՝ հարկ էր կանոնին ապսպրած զգուշութիւններովն ընէր։ Միայն այս ստորագէտն ուր նոյն յուլիս 14ին օրը, վանաց գլխաւոր մտից վրայի սենեակները բռնակողք՝ սաստիկ և անսովոր ջերմութիւն զգացին. այլ պատճառը նոյն օրերու ամառնային ջերմութեան տուին։

Սնկասկած ամենեւին սպառնացած վտանգէն, որ թուի թէ շատ իսկ կանուխ սկսած էր, երեկոյն վրայ հասաւ. և մինչդեռ յետ ընթերեաց աշակերտք ըստ սովորութեան 'ի հանգիստ կը պարապէին իւրեանց դասարանը, որ հանդէպ կայ վանաց գլխաւոր մտից, յանկարծ բոց ու ծուխ տեսան՝ որ տանեաց կղմնտրից տակէն ու ձեղունամիջին լուսամտէն վեր երկինքը կը բարձրանար։ Չարհուրած այն տեսլենէն՝ իսկոյն ազդը տուին անկասկած միաբանից։ Այլ մի և նոյն ատեն նաև բակին ծաղկոցը բազմող միաբանք նոյն բոցն ու ծուխը տեսան, որ ահաւորապէս կը սաստկանար, և ահաբեկած՝ սպառնալիքին տեղը հասան. դուռ, արդեւք, ինչ կար՝ խորտակուեցաւ, և ոչք կարող եղան 'ի ձեղունամէջը մտին. և ահա իրենց աշացը ներկայացաւ այն տեսարանը որու ամենեւին անփորձ էին, և որու աղէտալիութիւնը միայն միտքը կրնայ ըմբռնել։ Հոն հատածոց թղթոց կոյտք այլ և այլ հնոցներու ամբողջութիւն մը ձևացուցած էին, որք առ փոքր փոքր տարածուելով՝ ինչ սյրելի նիւթ կը գտնէին

բոցերով կը պատէին, ամեն բան լափելով, աւանայն ինչ սպառելով։ Վերէն ծածքին գերանները բոցավառ, վարէն տախտակամածը բռնկած. բոցերն՝ որ խաղալով ասդիս անդին կը բռնկցնէին, խզող ծուխն՝ որ այն գոց տեղ կենալը անհանդուրժելի կ'ընէր, այս ամենայն հոն մոտողաց սիրտը վերջին աստիճանի լքման մէջ ձգեցին. այն ահաւոր հնոցին դէմն առնելը անհնարին էր, և այն սակաւ ջուրն որ անօթներով փութացեր էին կրելու՝ կրակը լափեց ունայնացուց։ Հարկ էր տեղի տալ, վայրկեան մը յառաջ փախչիլ այն դժոխային տեղէն, եթէ չէին ուղեր շնչասպառ կորսուիլ, յուսաբեկ և լքեալ՝ թողին տեղին իւր ճակատագրին ու փութացան այլուր։

Մի և նոյն ատեն այն սակաւ սպասաւորք որ ներկայ կը գտնուէին 'ի վանատան՝ ջրհանը կազմեցին և սկսան արիարար բակին ծաղկոցէն բոցերու հետ կռուիլ։ Բայց ինչ յուսալի էր այնպիսի ահաւոր դէպքի մէջ անանկ անհրմուտ մարդիկներէ որ ոչ երբեք կրակ տեսած էին. թող որ զործւոյն անկատարութիւնն ամենեւին անգոր էր յաղթանակելու այն հնոցին, որ քամիէն հետ զհետէ շունչ առնելով՝ շարունակ կը տարածուէր, կը բռնանար ու ծխախառն վեր կը բարձրանար, և երկուստեք դէպ 'ի հիւսիս ու դէպ 'ի հարաւ կը քաշէր։ Թէպէտ ամենը անհնարին ճիգն կը թափէին՝ բոլոր իրենց աշխատութիւնն ունայն էր. հողմը, օրուան ջերմութեան հետեանքը, և

ու տախտակաց դարական շորութիւնը՝ ամենայն մարդկային ճգանց կը յաղթանակէին:

Ժամանակը կ'անցնէր և կրակը իր կատաղութեանը հակառակորդ չգտնելով՝ ձեղունաւ միջէն վարի յարկը կ'ինջնէր. արդէն սկսած էր ջնջել միանձանց սենեակներն որ հոն մօտ կը գտնուէին: Հոն մօտ էին նաև մեր երանաշը նորհ հիմնադրին սենեակը. այն պարկեշտ բնաւ կարանք ուր գրեթէ երեսուն տարի առաքինի կեանքը անցուցած էր, և ուր օրհնած էր իւր որդիքը մինչդեռ առ իւր ստեղծիչն կը փոխուէր: Ո՛րչափ յիշատակաց ընդունարանք չէին այն ճգնութեան ապաստանարանք, և ո՛րչափ փափագելի չէր մեզ փրկել անոնք՝ ուր հանապազ Մխիթարայ ոգին կը տեսնէինք: Սակայն այն ահաւոր բոցերուն դէմն առնել անկարող էինք. արդէն իսկ այն անձկալի սենեկաց գերանք սկսեր էին այրիլ, և մեր սիրտը կը փրղձէր կորուստը անդարմանելի տեսնելով: Եւ առկայն դեռ ևս յուսոյ թել մը մեր սիրտը կը յուսացնէր թէ կարելի էր փրկել այն սենեկաց գոնեայ մին, շատ էր որ քաղաքէն դալի օգնութիւնն այլ ևս չյապաղէր. մանաւանդ որ կրակը աւելի դէպ 'ի հարաւ կը քալէր, յամբ յառաջնելով դէպ 'ի հիւսիս՝ ուր դեռ ևս անարատ կը գտնուէր հիմնադրին աշխատութեան սենեակը: Հիմաուրց չէնքին կազմութիւնն իսկ 'ի նպաստ կու գար մեր այս յուսոյն. վասն զի նախ քարալէն որմունք, երկրորդ յարկաց գերաններուն բազմութիւնն ու ստուարութիւն

ներն, որ հին շինուածոց յատկութիւնն է, ըստ Սանտովինոյի վենետիկեան ոճին, կրակին առաջ՝ այլ դժուարապատելի անունդ տալով՝ կը յապաղէր զչէնն փութով ծախելու:

Այլ մեր ձախորդութեան ճակատագիրն էր որ նոյն գիշերը քաղքին Ս. Մարկոսի աշտարակին վրայ հսկող պահապանը մեր աղէտը շտեմնէ: Վասն զի նախ խոյոյ կղզւոյն արուեստական լուսաւորութիւնը, որ անմիջապէս մեր Ս. Ղազարու կղզւոյն ետեւը կ'իյնայ, անոր միտքը նախապաշարեր էր. և ապա Ս. Գէորգայ կղզւոյն աշտարակը, որ քաղքին ու Ս. Մարկոսի աշտարակին զիմացը կը կանգնի, այնպէս եկեր էր՝ որ մեր կղզւոյն հրդեհին տեսութիւնը կը խափանէր. և աշտարակին վրայ գիշեր ցորեկ հսկող պահապանն այն բոցը, եթէ տեսած իսկ էր ըստ մտին, լուսաւորութեան հետեանք համարելով՝ անկասկած մնացած էր վտանգին ազդը ժամանակին տալու: Եւ այսպէս զօրաւոր օգնութիւնը յապաղելով՝ երկու յաւիտենական ժամ սպառիչ տարեր ձեռքը մնացինք:

Սակայն ժողովրդեան ալիքն՝ որ նոյն հանդիսին գիշերը ամեն ուղղութեամբ քաղաքը կը քալէին, այն անսովոր բոցը տեսնելով՝ հասկցեր էին ծանր աղիտից արկածը, և բազմութեամբ քաղքին ծովափը զիջուած՝ կ'ափսոսային մեր դառն վիճակին, մինչև բերնէ բերան չար լուրը անցնելով՝ հասաւ ջրհանակրաց պաշտօնարանը: Մի և նոյն ատեն հեռագիրք իսկ փութացին

ու տախտակաց դարակաւն շորութիւնը՝ ամե-
նայն մարդկային ճգնաց կը յաղթանակէին:

Ժամանակը կ'անցնէր և կրակը իր կատա-
ղութեանը հակառակորդ չգտնելով՝ ձեռունա-
մխլէն վարի յարկը կ'ինջնէր. արդէն սկսած էր
ջնջել միանձանց սենեակներն որ հոն մօտ կը
գտնուէին: Հոն մօտ էին նաև մեր երանաշը-
նորհ հիմնադրին սենեակը. այն պարկեշտ բնա-
կարանք ուր գրեթէ երեսուն տարի առաքինի
կեանքը անցուցած էր, և ուր օրհնած էր իւր
որդիքը մինչդեռ առ իւր ստեղծիչն կը փո-
խուէր: Որչափ յիշատակաց ընդունարանք չէին
այն ճգնութեան ապաստանարանք, և որչափ
փափագելի չէր մեզ փրկել անոնք՝ ուր հանա-
պազ Մխիթարայ ոգին կը տեսնէինք: Սակայն
այն ահաւոր բոցերուն դէմն առնել անկարող
էինք. արդէն իսկ այն անձկալի սենեկաց դե-
րանք սկսեր էին այրիլ, և մեր սիրտը կը փրդձ-
կէր կորուստը անդարմանելի տեսնելով: Ե-
սակայն դեռ ևս յուսոյ թել մը մեր սիրտը կը
յուսացնէր թէ կարելի էր փրկել այն սենեկաց
գոնեայ մին, շատ էր որ քաղաքէն գալի օգնու-
թիւնն այլ ևս չյապաղէր. մանաւանդ որ կրա-
կը աւելի դէպ 'ի հարաւ կը քալէր, յամր յա-
ռաջնով դէպ 'ի հիւսիս՝ ուր դեռ ևս անա-
րատ կը գտնուէր հիմնադրին աշխատութեան
սենեակը: Հինաւորաց չէնքին կազմութիւնն
իսկ 'ի նպաստ կու գար մեր այս յուսոյն. վասն
զի նախ քարայէն որմունք, երկրորդ յարկաց
գերաններուն բազմութիւնն ու ստուարութիւ-

նըն, որ հին շինուածոց յատկութիւնն է, ըստ
Սանսովինոյի վնեւտկեան ոճին, կրակին ա-
ռատ՝ այլ դժուարասպառելի սնունդ տալով՝
կը յապաղէր զչէնն փութով ծախելու:

Այլ մեր ձախորդութեան ճակատագիրն էր
որ նոյն գիշերը քաղքին Ս. Մարկոսի աշտարա-
կին վրայ հսկող պահապանը մեր աղէտը չտես-
նէ: Վասն զի նախ Լիտոյ կղզւոյն արուեստա-
կան լուսաւորութիւնը, որ անմիջապէս մեր Ս.
Ղազարու կղզւոյն ետևը կ'իյնայ, անոր միտքը
նախապաշարեր էր. և ապա Ս. Գէորգայ կղ-
զւոյն աշտարակը, որ քաղքին ու Ս. Մարկոսի
աշտարակին դիմացը կը կանգնի, այնպէս եկեր
էր՝ որ մեր կղզւոյն հրդեհին տեսութիւնը կը
խափանէր. և աշտարակին վրայ գիշեր ցորեկ
հսկող պահապանն այն բոցը, եթէ տեսած իսկ
էր ըստ մտին, լուսաւորութեան հետեանք
համարելով՝ անկասկած մնացած էր վտանգին
աղղը ժամանակին տալու: Եւ այսպէս զօրա-
ւոր օգնութիւնը յապաղելով՝ երկու յաւիտե-
նական ժամ՝ սպառիչ տարեր ձեռքը մնա-
ցինք:

Սակայն ժողովրդեան ալիքն՝ որ նոյն հանդի-
սին գիշերը ամեն ուղղութեամբ քաղաքը կը քա-
լէին, այն անսովոր բոցը տեսնելով՝ հասկցեր էին
ծանր աղիտից արկածը, և բազմութեամբ քաղ-
քին ծովափը դիզուած՝ կ'ափսոսային մեր դառն
վիճակին, մինչև բերնէ բերան չար լուրը անց-
նելով՝ հասաւ ջրհանակրաց պաշտօնարանը:
Մի և նոյն ատեն հեռագիրք իսկ փութացին

շար դէպքը աշխարհին չորս կողմը տարածելու,
« Մխիթարեան Հայոց հոգակաւոր մենաստա-
նը բոցերու մէջ է », հեռագրելով Մխատրիա,
'ի Գաղղիա, 'ի Գերմանիա, յԱնգղիա, և այ-
լուր:

Գ.

Եւ յերաւի ժամէ մը 'ի վեր Մխիթարակերտ
տունը անօգնական և իբր լքեալ՝ բոցերու ճա-
րակ կ'ըլլար: Ժամը տասն անցած էր՝ և դեռ
ևս օգնական ձեռք մը չէր հասած. հուրը եր-
թալով կը յառաջէր և յուսադատութիւնը սրը-
տերնուս մէջ կը դնէր. արդեօք առաւօտեան
լոյսը մենաստանին որմերը կանգուն պիտոր
տեսնէր: Քամին որ կը սկսէր սաստկանալ զմեզ
յուսարեկ կ'ընէր. միայն աստուածային ձեռքը
կրնար այն հարուածը դադրեցնել: Եւ սակայն
անգին զանձեր կային որոնք հարկ էր փրկել.
անանկ զանձեր՝ որ իբր ազգային սուրբ աւանդ
երկիւղածութեամբ կը պահուին. զանձք որ ոչ
միայն մեր նախնի հարց դարական քրտամբը
հաւաքեալ են, այլ և 'ի բարեպաշտից և 'ի բա-
րեսէր ազգաւորաց 'ի յիշատակ թողուած: Սոս
ամենը հարկ էր ժամ 'ի յառաջ ջնջման վտան-
գէն հեռացնել. զորք դժուարին և աշխատա-
թիւն անտանելի. սակայն եթէ ողջոյն մենա-
ստանն ջնջուէր՝ ասոնք պէտք էին փրկուիլ: Եւ
այնպէս եղաւ. թողլով միանձանց պարկեշտ
օհնեակներն՝ ամենայն բովանդակածովն՝ հրոյ

ձարակ, այն անգին զանձերուն փրկութեանը
փոթ եղաւ, և հեռու հեռու որչափ հնար էր
վտանգէն ապահովեցան:

Ինչ ահաւոր տեսարան էր այս ատենս մեր
խաղաղաւէտ կղզեկին: Աղիւսից կեդրոնէն հե-
ռանալով՝ 'ի բացուստ կը դիտեմ զայն, մինչ-
դեռ արտասուածոր աչքս լճակին վրայ կը
ձգեմ տեսնել թէ կու գայ մեզ ուստեք օգնու-
թիւն: Հարուային կողմէն երկնից վրայ կար-
ծես հիւսիսայգ մըն էր կը տեսնուէր, այլ ք-
հաւոր հիւսիսայգ որ սիրտ կը ձնէր: Սոյն հիւ-
սիսայգին կեդրոնը զարհուրելի հնոցի մը բա-
բգաձև վեր կը բարձրանար. ծովը պարու-
րաձև պլլուելով մերթ վեր երկինքը կ'էլէր
մերթ ալ բոցին հետ քամիէն զարնուելով՝ քի-
մնակի կը կործանէր, ինչպէս արէտանջ նաւ
մը հովուն ու ծովուն ալիքներէն: Սոյն ծխին
մէջէն հազարաւոր կայծակունք ուտոտուելով
առգիս անդին կ'իյնային, ապառնալով հուրը
տարածելու և բոլոր չէնքը հնոց մը դարձնելու:
Եւ այս սպառնչ տարեր ոչ ոք էր որ ընդդի-
մադրէր: Թէպէտ և զանգակաց հնչիւնն ան-
դադար օգնութիւն կը կանչէր, այլ անոնց
ձայնը օգու մէջ անպատասխան կ'անհետաւ
նար: Ծովուն վրայ մերձաւորապէս լուծեան
մեռելութիւն էր, և միայն հեռուանց դեռ ևս
զբոսասիրաց նաւակներուն երթեկը կը տես-
նուէր: Տագնապեալ, փղձկեալ սրտիւ՝ փորձ կը
փորձեմ թէ ձայնս այն նաւակաց կրնայ մեր
աղէտին ազգը տանիլ, որչափ ուժ կայ կրճոցս

վրայ՝ թողերս կ'ուռեցնեմ և « օգնութիւն » կը կանչեմ. այլ աշխատութենէ ու ծարաւէ կերկերեալ կոկորդիս մէջէն՝ խզդուկ ձայնս ջրին վրայէն կը սահի ու հեռաւորութեան մէջ կը մարի:

Եւ սակայն մարդասիրութիւնն՝ որ անհրաժեշտ ամեն թշուառութեան դուռը կը գլուխուրդէ մեզի ալ մերձ էր: Քանի մը քայլ անդին գինուորական սպայից խմբիկ մը սուլիս կ'ելլէ. միսթարութեան ու յուսոյ շառաւիղ մըն էր: Կը հարցընեն տեղեկանալու թէ քաղաքէն հըրշիկցեք եկան. կը զարմանան թէ ինչու այդպէս յամր կը շարժին վտանգին տեղը հասնելու: Զինուորաց խումբ մը հանդիպակաց կղզին պատրաստ ու կազմ կեցած են, կ'ըսեն, և միայն նաւակաց պէտք ունին դէպ 'ի մեզ անցնելու: Այլ մեզ ուստի՞ է մարդ և նաւակ գլուխուրդէն այն տազնապալից ժամը, որ անոնք բերելու դրկենք. այն շիտթութեան գիշերը, այն խառնակութեան վայրկեանը՝ միայն հրաշափործ սուրբ մը, միայն Աստուծոյ ձեռքը կ'ընար մեր չըջապատ ջուրը ցամքեցընել, և կամ ուրիշ աներեւոյթ ճամբով այն զօրաց խումբը մեր քովը հասցընել:

Մինչդեռ այն սպայից կ'առաջնորդեմ աղիտից վայրը.

— Զգոյշ, կ'ըսեն, չըլլայ թէ քաղաքացի դը կղզին ոտք կ'ոխէ. գողք սոսկիսի ժամ կը փրնտուեն իրենց ազատ ելումուտին: —

Եւ 'ի դէպ էր խորհուրդը. հազիւ քայլս ուրիշ

կողմ մը կ'առնում, աննշան երիտասարդաց խմբիկ մը դիւ կը դիմաւորէ. անոնց օգնելու, ձեռք տալու ցուցած փոյթը, պատրաստակա նութիւնը, յօժարակամութիւնը՝ միտքս կասկած կը ձգեն. անոնց արտաքին երևոյթն իսկ այս կասկածս աւելի կը սաստկացընեն, որովհետեւ բաւական իսկ զգեստ չունին վրանին: Փոխանակ վտանգին տեղը իրենց առաջնորդելու ինչպէս կը խնդրեն, գիրենք ետ կը վարեմ. և մինչդեռ արտունջ կը բառնան ու կը բողբոքեն թէ ուղիղ սրտիւ և միայն մարդասիրութենէն մղեալ փութացեր են շիտակ ճամբէն գալու, բռնադատեալ՝ պատը կը մագլցեն և անդին իրենց պատրաստ նաւակը կը կործանին՝ ուր այլ ընկերք իրենց կը մնան: Եթէ կրաւէն չէ գտնէ գողութեան հարուածէն ազատեր էինք: Քիչ մը ետքը զօրաց խումբ մը նաւակներ գրաւելով կղզին թափեցան, և ամենայն ուղղութեամբ շէնքին մէջ ցրուելով, ոճանք 'ի պահպանութիւն դբաղեցան և այլք 'ի փրկանս:

Եւ աստ 'ի դէպ է երախտագէտ ձայն մը բառնալ 'ի գովեստ այս զօրականին, որ նոյն աղիտից գիշերը ժամն ձիգս ոգւով չափ վտանակեցան, և մեզ լքելոցս և անճարակելոցս օգնութեան ազգու ձեռք մը տուին. եթէ այս արիւ և անձնանուէր զօրականը չըլլար՝ շատ բան հրոյ ճարակ կ'ըլլար:

Իտալացի գինուորը թշուառութեան ապաստանարանն է. ուր վտանգ կայ, ուր ցաւ կայ, ուր ձախորդութիւն կայ, իտալացի գինուորը

հոն կը գտնես, որ բարերար ձեռքը վտանգե-
լայն, թշուառացեղոյն կ'երկնցնէ. և շատ այն է
որ դիւցազնական անձնութեամբ վտան-
գաց դիմադրաւ երթալով՝ մերձաւորին փրկու-
թեանը համար ինքզինքը կը զոհէ: Ոչ միայն
պատրաստական է պատերազմի ժամանակ
հայրենեաց փրկութեանը համար աներկիւղ իւր
արիւնը թափելու, այլ և խաղաղութեան ժա-
մանակ իբր բարեգութ դայեակ կը հսկէ հասա-
րակաց բարօրութեան: Չկայ դովետ որ ըստ
արժանւոյն դրուատէ անոր արժանիքը: Անոր
համար ալ իրաւամբ ժողովուրդը գագցես կը
պաշտէ իւր զինուորականքը, և ամեն առիթ 'ի
կիր կ'առնու իր երախտադիտութեան եռան-
դուն ցոյցը անոնց տալու:

Դ

Չինուորականաց դալուստն ամենուս վրայ
արիւթիւն ու յոյս տալաւորեց. այնուհետեւ
լքեալ ու մոռացեալ չէինք: Սակայն եթէ կա-
հուց փրկանքը կը հողացուէր, միւս կողմանէ
հրոյ բռնութիւնը կը սաստկանար և աւելի կը
ծաւալէր. հարկ էր թէ ջրհանք այլ ևս չյապա-
ղէին, ապա թէ ոչ դիւանատունը անդարմա-
նելի կորստեան վտանգի մէջ էր:

Ժամը տառնուկէս էր երբ մերձակայ կղզւոյն
երկու ջրհանք իրենց սպասաւորներովը կըղ-
զւոյս դուռը մտան, և անմիջապէս կրակին դէմ
կուռիլ սկսան: Բայց այս ատենա հուրն այն

սաստիճանի բռնացած էր՝ որ այն երկու ջրհա-
նաց ամենայն հիգն 'ի դերեւ կ'եղէր: Բարբոքեալ
աւերակք հետզհետէ շառաչմամբ կործանելով՝
տխուր դղրդմամբ ողբ կը թնդացնէին. մարդոց
աղաղակք, գործեաց թնդիւնք, հրոյ ճարճա-
տիւնք, բոցոյ սաստկութիւնը, ծխոյ պարոյրը,
կայծից ցրումը՝ դժոխային տեսարան մը կ'ը-
նէին տեղին. կարծես գոռացող կատաղեալ
ծովու կեդրոնն էինք, և շուրջնակի տարերք
կատաղաբար գիրար սպառելու կը կռուէին:
Մենաստանին բնակութեանց մեծ մաս մը բո-
բոքեալ կ'այրէին. Հարց բնակարանքն, աշա-
կերտաց ննջարանն, Մխիթարայ սենեակք, ա-
մենը առ հասարակ բոցերու մէջ էին: Կրկին
ջրհանք անդադար ջրով կ'ողողէին, այլ ջուրը
շառաչմամբ շոգիւնալով՝ կարծես կրակին ծու-
խըն ու բոցը աւելի կը բորբոքէր: Սակայն շա-
րունակեալ աշխատութիւնը կամաց կամաց բո-
ցերուն յառաջադիմութիւնը կը սկսի յամբացը-
նել. դեռ ևս յուսոյ նշող մը սրտերնիս կը մըտ-
նէ, որ եթէ քաղաքին հզօր ջրհանք հասնին՝ շի-
նին մնացեալ մասը կը փրկուի. բայց եթէ ժամ
մին այլ ևս յապաղէ՝ ամենայն ինչ կորսուած
է. արեւն որ ծագէ Ս. Ղազարու կղզւոյն վրայ՝
մոխրոյ կոյտ մը միայն պիտոր տեսնէ:

Որչափ ալ մարդկային անհնարին ճգունք
մէկ կողմանէ կը յաջողին հրոյն սաստկութիւ-
նը ամօքել, չեն կրնար խափանել որ ուրիշ կող-
մէն ինքն իրեն ճամբայ չբանայ: Քամին որ առ
վայր մը ինջեր էր, հիմա դարձեալ կը սկսի

սաստկանալ, և կրակը որ դիւանատան շէնքին հասած էր, իրեն երկու ճամբայ կը բանայ դէպ յարեւելս. մէկը վարդապետաց սենեկաց վրայէն դէպ 'ի երիցագոյն աշակերտաց վարժարանը կը գիւմէ. միւսը արքայարանին սենեկաց վրայէն դէպ 'ի գրատունը: Հողմը որ զբոցերը առաստաղին միջէն կը մղէ՝ առ վայր մը դիւանատունը յապահով կ'ընէ. սակայն երթալով կրակը գինքը երկու կողմանէ կը պաշարէ, և վայրկեանէ վայրկեան կրնայ անոր ալ ընդհարիլ:

Սրտիս տաքնապը առ վայր մը իջեցնել ուզելով՝ աղիտից վայրէն կը հեռանամ, և ծովակին վրայէն աչքս դէպ 'ի քաղաքը կը ձգեմ. մի և նոյն ատեն ժամահարը գիշերային տառնըմէկը կը զարնէր: Հեռաւորութեան մէջ շարժող լոյսեր կը նշմարեմ. լոյսեր՝ որ երազաբար դէպ 'ի մեզ կը յառաջեն. սիրտս ամուր մը կը բոբախէ. արդեօք ակնկալած օգնութիւնն է. դեռ ևս տարակուսի մէջ կը մնամ: Այլ լոյսք երթալով կը մերձենան, և լոյսերուն հետ աղմուկ կը լսուի. չիք տարակոյս, շոգեշարժին շառաշն է. փրկութիւնը մերձ է կը կանչեմ, և յուսոյ վստահութիւնը լքեալ սրտիս մէջ կը հաստատուի: Նախ կոնտորայք կը համին ու վանացս դուռը կը մտնեն. քաղաքական իշխանաւորք են, որ 'ի պարտուց՝ վտանգին տեղը հասնելու կը փութան: Անոնց ետեւէն շոգեշարժ հզօր ջրհանն երազաբար կը հասնի, որու կը յաջորդեն հետզհետէ այլ ջրհանք քաղաքական, գինուորական ու նաւա-

կան: Այն ժամէն Ս. Ղազարու դատակիւնքը լուծուած էր, և անոր պատուականագոյն մասըն ապրանսաց յոյս կը ոտանար:

Ե

Մէկ րոպէի մէջ այն փորձ ջրհանակիրք ամեն դին կը թափանցեն. տապալը ծածքերուն վրայ կ'իջնայ, և ջուրը հեղեղօրէն բոցերուն վրայ կը սկսի տեղալ: Սակայն հրոյ տարածութիւնը շատ ընդարձակ էր՝ որ կարենային փութով շիջումը տեսնել: Գողցես եօթանասուն մեզր երկայնութեամբ՝ ճակատը բորբոքեալ կ'այրէր, թող այն երկու ճիւղը որ դէպ յարեւելս կը քալէին: Բայց և այնպէս շոգիաշարժ ջրհանը, որու ահաւոր խողովակը շորս հոգի հաղիւ կարող էին զուսպ ունելով ուղղել, ջրի ահաւոր սիւնակ մը մեծ բարձրութեամբ վեր կը նետէր. անոր բաղխմանը առջին՝ ողջոյն չէնքը կ'երեւար, և խանձողք խախտելով շառաւմամբ կը կործանէին: Արդէն յառաջադէմ էին ըստ բաւականի՝ աւերակաց ու ծխոյն միջէն ոտն առ ոտն բոցերը հալածելով, երբ ջրհանակրաց գլխաւորը, որ եռանդեամբ և աներկիւղ կը շահատակէր՝ ամեն մէկին հրամաններ տալով, յանկարծ անուշադրութեամբ խարխալեալ որմի մը մերձեցաւ. քար մը՝ որ կարծես առթի կը սպասէր, որմէն բաժնուելով դէպ ուղիղ գլխուն ինձաւ. բայց այն եռանդուն երիտա-

սարդին ժամը չէր դարկած. գլխոյ փոքր շարժում մը բաւական եղաւ մահացու հարուածէն զինքն ազատելու. այլ ուսին փոյ իջնալով՝ հարուածեց ամուր մը և վիրաւորեց. բայց և այնպէս տեղի չտուաւ իր պարտուց առջին մինչ չեցվերը: Սակայն այն հարուածն աղէտալի եղաւ սպա. քանի մը եօթնեկաց հիւանդութենէ ետքը թէպէտ և կանգնեցաւ, այլ ջղային այլ-այլութիւն մը դեռ ևս կը շարունակէ, զինքը ուժաթափ ընելով:

Մինչդեռ չորեքշաբթ ջրհանն առջեւն բոցերը կը հալածէր, յետուս դարձեալ կրակը բուռն կը սաստկանար. և այնքան աւելի կատաղու թեամբ՝ որքան արդի չէնքի կազմութեան տճը դիւրակէզ կ'ընէր զայն. գոգցես թղթեայ ըլլար՝ այնպէս կը սպառէր: Հարկ կ'ըլլար որ ջրհան նակիրք միւսանգամ ետ դառնային նոր վտանգին առաջն առնելու:

Մինչդեռ ասոնք այսպէս կը ճգնին, միւս ջրհանք այլ և այլ կողմերէ կրակը կը պատեն, և ըստ իրենց ուժայն անոր սաստկութիւնը կը զբաւեն. բայց կրակը դիւանատան չորս կողմը կը պատէ և փայտեայ դրան կ'ընդհարի: Անձկու թեան և արհաւիրաց ձայն մը ամենուս սրտէն կ'արձակուի. գրեթէ երկուց դարուց պատմական գրաւոր գանձք՝ անդամանեղի կորուստ պիտոր մատնուին: Վտանգն աչքերնուս չերեւար. մեր սրտին անձկութիւնը զմեզ կը մղէ այն դժոխոց տեսարանին մէջէն անցնիլ երթալ, և այն անձկարի գանձը ազատել: Բայց այդ յան-

դուգն մտածութիւնը գլուխ տանելը անկարելի է. ու յանդգնի այն բոցերուն մէջ ինքզինքը նետել՝ մէյմըն ալ ետ դառնալ չկրնար. խանձողք, բոցն ու ծուխը վայրը անմատչելի կ'ընեն. և սակայն վայրկեանէ վայրկեան այն դուռը կրնայ բռնկիլ, որմէ ետքը ամենայն ինչ կորսուած է:

Բարեբաղդ դէպք մը այս վտէն զմեզ կ'ազատէ. հողմը որ առ վայր մը նուազեալ էր՝ յանկարծ ամուր մը կը շնչէ. բոցն ու ծուխը դէպ յարեւել կը մղուին սաստկազին, և նեղ անցք մը կը մնայ դիւանատան ու խանձողաց մէջ: Վանաց առաջնորդը, որ իբր յետին 'ի հպատակաց վտանգին ամեն դին կը դառնուէր, նախ առաջին կը դիմադրաւ, դուռը կը խորտակէ ու ներս կը նետուի. բայց այն անձուկ ու խղճուկ տեղւոյն մէջ կենալը անկարելի է. ծուխն այնպէս լցուցած է տեղին՝ որ շնչելը անկարելի է և մուտքը խիթալի: Սակայն հարկ է մտնել. հարկ է այն գանձը ապահովել. արիաքար դէպ 'ի պատուհանները կը նետուի, կը խորտակէ, կը բանսց, և հողմը մէկ վայրկեանի մէջ տեղին կը մաքրէ: Այդ առաջնորդին կը հետեւին և անմիջապէս այն պատմական գանձուց փրկանքը պատուհաններէն կ'ըլլուի, մինչդեռ միաբանից խումբը 'ի ստորե գանձոց ժողովելով կ'ապահովէ հեռու 'ի վտանգէ: Բայց դիւանատան մէջ ուշանալը ամենախիթալի է. հողմը կարելի է վայրկեանէ վայրկեան իր ուղղութիւնը փոխէ. և եթէ այն մի միայն

անձուկ մուտքը և սանդուղքը պաշարե՛լ ներսը նահատակողաց կեանքը վտանգի մէջ կը դնէ. որովհետեւ տեղւոյն բարձրութիւնը անոնց փախուստը անկարելի կ'ընէ: Զինուորաց խմբիկ մը այս վտանգը կը տեսնէ, և աներկիւղ հոն կը յարձակին. փրկանաց ձեռք կու տան, և կը ստիպեն զսամենը փութով խոյս տալու: Եւ արդէն ժամ էր. սակաւ մի ևս և այն սնձուկ սանդուղը բոցերէ պաշարեալ՝ ոչ ումք անցք պիտոր չնորհէր: Ամենը աներկիւղ ետեւէ ետեւ այն սանդղէն վար աւելի կը կործանին քան թէ կ'իջնան. այլ ամենը ողջանդամ և անզոր ըստիրտ. մինչև պետին թղթիկը ազատած էր:

9.

Ժամը երկուք էր կէս զիշերէն յետոյ. ամենը լքեալ, շնչասպառ աշխատութենէ. ստորին սըրահք գրեթէ ծնկիւ չափ ծովային ջուրն լցուած էր և դեռ ևս կը լցուէր. որովհետեւ այնքան էր շոգեշարժ ջրհանին և միւս ջրհանաց թափած ջուրն, որ վերի գտակոնից սրահից վրայ ծանրանալով՝ կործանելու չափ կը վտանգէր: Խորհրդով փանաց ճարտարապետին, որ բարեբաղդաբար ներկայ էր հրդեհին, սրահից քարայէն յատակը կը ծակուին, և ջուրն հեղեղօրէն իջնելով՝ ստորին սրահից մէջ կը դիզուի: Հարկ էր որ այն արի զինուորք, ծխէն սևացեալ դիմք և աշխատութենէ աղտեղեալ ու թրջեալ հանդերձիւք՝ այն դիզեալ ջրոց մէջէն

երթևեկէին: Սակայն վտանգը իւր յետին տաճմանը հասած էր. հուրն ամեն կողմէն առանձնացուցած էր և այնուհետեւ որ ինչ բռնկած էր՝ այն միայն կ'այրէր, զոր հետզհետէ կը մարէին: Զինուորք իւրեանց մարդասիրական գործը աւարտած էին: Փողոյն կոչը հնչեց և հարկիւր զօրականաց խումբ մը ստորին սրահին մէջ իրենց շարքին կարգը առին: Չուրըգրեթէ՝ ի ծունկըս կը հասնէր. սպայք այն ջրին մէջէն քայլելով անուանական հանդէան ըրին. ոչ ոք պակաս էր յեկելոց. այնքան վտանգին մէջէն ձախտողութիւն չէր դիպած, բաց ՚ի յամանց թեթև վիրաւորելոց: Ելան մեկնեցան կղզեկէս, մեր շնորհակալեաց օրհնութիւնը հետերին տանելով: Եթէ այս զօրաց անձնամատոյց արիութիւնը չըլլար՝ մենաստանիս կրած վնասը շատ աւելի ծանր պիտոր ըլլար. որովհետեւ անանկ դառն դէպքի մէջ մարդուս վրայ այնպիսի լքումն կը տիրէ՝ որ անփայթ կ'ըլլայ իր ստացուածքը փրկելու: Ինծի ըսողաց որ այս կամ այն առարկայն փրկեմ, տեսնելով թէ ինչպէս տղջոյն չքեղ չէնքը կը ջնջուէր, « Է՛հ, կ'ըսէի, ի՞նչ օգուտ չնչին առարկաներն ազատեցէն՝ երբ տան հիմունքը կը ջնջուին » . և անստոյգ և տարակուսեալ բոցերու կը նայէի: Պատուականանպոյնք և անզտանելիք փրկելէն յետոյ, այլն ամենայն ոչինչ կ'երևար աչացս: Այս արի զինուորաց անձնամատոյց նուիրման պարտական ենք շատ առարկաներ փրկուելուն. որ արիաբար բոցերու ու խանձողաց մէջէն անցնելով՝ մերթ այս և

մերթ այն առարկայն կը կորզէին ու վտանգէն հեռու կը տանէին. այսպէս մեր հարց կենդանաբար ողջն հաւաքում մը փրկեցաւ, թող այլ բաղմամբիւ առարկաներ:

Ժամը իրեք ու կէս անցեր էր. դեռ ևս ջրհանք կը գործէին, այլ կրակին ծաւալումը զսպումս էր. խանձողք և այրելիք դեռ ևս կը շարունակէին բոց արձակել, այլ վտանգը անցած էր: Հորիզոնը կը սկսէր պայծառանալ դէպ արևելք, և խիտոյի զրօսասիրաց բազմութիւնը կամաց կամաց կը սկսէր դէպ 'ի քաղաք դառնալ. մէկ կողմանէ՝ գուարթութեան ծիծաղը կը դադրէր, միւս կողմանէ՝ աշտուրաց երկկողմանայն ինչ տարբերութիւն վիճակի. որ սիրտ կրնար աչաց արտասուքը բռնել այն դեռ ևս բոցավառ ու ծխող աւերակաց առջին: Ս. Ղազար՝ որ դեռ ևս երեկուան օրով այնպէս չէն, մաքուր, գեղեցիկ ու ծաղկեալ՝ այցելուաց ապաշտութիւնը կը գրաւէր, արևն որ ծագէ և իւր բոլոր լուսովը տեսարանը լուսաւորէ, աւերակաց, խառնակութեան և աղտեղութեան վայր մը պիտոր գտնէ: Այն քառակուսի ծաղկանոցը, որոյ հոտաւէտ ծաղկանց բուրումը կը հիացընէր, արդ ոտից կոխան եղած՝ անվայելչացած էր. ծաղկունք խամրեալ, ծառք խանձեալ: Իսկ վերը սրահից մէջ ինչ անպատմելի խառնակութիւն. կռուի դաշտ մը կը նմանէր, ուր զընդակաց ու ռմբից կատաղութիւնն ամենայն ինչ ջախջախած, խորտակած ըլլար: Ամեն տեսակ կաշ, ամեն տեսակ նիւթ խառն իրարու վրայ

կործանած կային. և անոնց մէջէն ջրհանոց թափած ջուրը առուակներ շինած էր: Աղտեղութիւն, խառնակութիւն էր ամեն դէմ ուր առաջ բարեկարգութիւնը կը տիրէր ու շնորհք տէր Աստուած, արդեօք սա դժոխքը նորէն պիտոր բարեկարգի:

Արշալոյսն որ սկսեր էր կարմրիլ՝ կամաց կամաց արևուն գունտը հորիզոնը մոռց. պայծառ առաւօտ մըն էր և յստակ երկինք, այլ Ս. Ղազարու վրայ ծխոյ ու բոցոյ նսեմութիւնը դեռ ևս կը տիրէր. սակայն ջրհանոց բազմութեան գործը լնցած էր, ու հետ զհետէ տեղի կու տային: Բայց և այնպէս երկու ջրհանք մնացին իւր պահակ 'ի զգուշութիւն անակնկալին. զի դեռ ևս խանձողք աստ անդ կ'այրէին, և մերթ ընդ մերթ կը բռնկէին ու բոց կու տային: Եւ տեեց այս վիճակը մինչև հինգշաբթի. որմէ ետքը որմնադրաց գործն սկսաւ:

Ի

Ինչ տխուր լուսցաւ կիրակէն. հարիւր եօթնասուն տարիէ 'ի վեր Մխիթարաց տունն այնպիսի տէրունական օր չէր տեսած: Ղազարեալ էին սաղմոսերգութիւնք, դադարեալ էին եկեղեցւոյ արարողութիւնք և ամենայն կրօնական շքեղութիւն, և անոր փոխանակ տխուր լուսութիւն մը կը տիրէր միանձանց վրայ. սակայն աստուածային կամաց համակամութիւնն կը զօրացընէր զամէն:

Չախորդ լուրն ոչ միայն ողջոյն քաղաքը տա-
րածուած էր, այլ և արտաքոյ: Քաղաքացի լը-
րագիրքը խօսելով Ս. Ղազարու հարուածին վը-
րայ՝ կ'ափսոսային ու կը վկայէին թէ քաղա-
քացւոյ տնտեսութեան ուրախութիւնն 'ի
սուգ դարձած էր այն տխուր ձախորդութեան
առջին: Քաղաքին իշխանաւորք և մեծամեծք եւ
սեւէ հտե կը փութային իրենց ցաւակցութիւնը
մատուցանելու, սմանք գրով, այլք բազմազոյնք
անձամբ մենաստանիս դուռը գալով: Քաղա-
քապետն քաղքէս հեռու գտնուելով իւր փոխա-
նորդն եկաւ մեզի ցաւակցելու, և անոր հետ
քաղքին սինդիկոսն 'ի ցոյց իւր մտերիմ բարեւ-
կամութեան: Ասոնց ընթացակից եղան ղինուու-
րականաց մեծք, յորս յիշելու ենք Քոզէնց և
Բիանէլ զօրապետները: Քաղքին ծիրանաւոր
պատրիարքն իսկ վսեմ. Գ. Աւետիկնի' իւր ան-
թիւ զբաղանքը թողլով ուղեց անձամբ գալ մեզ
վնտաւըցս 'ի քաջաբերութիւն, որոյ օրինակին
հետեւեցան և այլ բազում եկեղեցական իշխա-
նաւորք, և հոսի ուրեմն իննսնամեայ ազնուա-
տոհմ և մարդկութեան բարերար Քանալ Աւ-
րացն: Ի հիւպատոսաց յիշելու ենք նախ մեր Օս-
մանեան հիւպատոս, Ղազդիոյ և Աւստրիոյ հիւ-
պատք, և Ամերիկոյ Միացեալ Նահանգաց հիւ-
պատն, որ անձամբ աւերակաց վրայէն քայլելով
ուղեց հաւաստել դիպած աւերումը: Իսկ յիշ-
խանաւոր արքայազարմ օտարաց 'ի քաղաքս
բնակելոյ՝ յիշելու ենք Տօն Կարլոս՝ Սպանիոյ
թագապաշտնին գալուստը, որ 'ի մանկութենէ

անտի սէր ու մտերմութիւն ցուցած է Ռէստիս:
Այլ և քաղաքացւոյ ազնուականք իսկ իրենց
քաջաբերիչ միակեարութիւնը չզլացան մեզմէ:
Երբ խառնեցան նաև օտարազգի քաղաքա-
բնակք, գլխաւորապէս անգղիացի, ամերիկացի
և աւստրիացի: Ինչպէս նաև Ռապիլան կոմսին,
իտալական դեսպանին 'ի Վիեննա, ողջոյն ըն-
տանիքն քաղաքս գտնուելով՝ անձաւր եկին
մեզ յայց: Այս ամենուն ձայնակից եղան լը-
րագրոց թղթակիցք, որք կը ներկայանային մե-
նաստանիս դուռը, խնդրելով ներումն և ըն-
դունելութիւն՝ անձամբ հաւատտելու եղածն
և իրենց ընթերցողաց հաղորդելու: Այս թղ-
թակցաց գրութիւններէն յառաջ եկան այն լի
գովեստիւք գրուածք, որ մինչդեռ ցաւակցե-
լով ձախորդութեան տխուր դէպքերը կը պատ-
մէին, մենաստանիս պատմութիւնն իտալական
լրագրոց մէջ յարգութեամբ կը հրատարակէին:
Եւ ասոնց արձագանդն կը տարածուէր յԱւ-
ստրիա, 'ի Գազդիա, յԱնգղիա և յԱմերի-
կա. և այսպէս մեր բազմաթիւ բարեկամաց
ծանօթութեանը կը հասնէր եղածն, յորոց և
ցաւակցութեան թուղթք և հեռագիրք սկսան
յաճախել վանացս դուռը:

Հոսի ուրեմն յիշելու ենք յարգանքօք ու երախ-
տագիտութեամբ նաև Խտալիոյ օգոստափառ
թագուհին, որ իւր մարդասիրական ազնուախոհ
թափին տեղիք տալով ուղեց մեր թշուառու-
թեան միակեարակից ըլլալ: Հատ իւր տարեկան
սովորութեան իւր գալուստն աղղելով կանխաւ

մեր վանաց դռուք, օգոստոսի 10ին անուշտեան Պատարագի խորհրդոյն ներկայանալէն յետոյ, ելաւ բազմեցաւ 'ի Գրատուն, և գրեալ թէ Ժամմի ողջոյն մտերմաբար խօսակցելով առ ռանձին սուանձին ամենուն հետ, ուղեց տեսնել նաև տպագրատան արդիւնքը, խրախուսելով զամէնը յարիւթիւն և 'ի գործ: Եւ ապա մինչ մեկնելու կ'ըլլար, յառաւել միւրիւթարութիւն մեզ՝ հետեւեալ իմաստը կը գրէր բուն իւր ձեռամբ, ու մշտնջենաւոր յիշատակ կը թողուր իւր մարդասիրութեան՝ մեզ և մեր ապագայից: Դրուածքն այսպէս կը հնչէ.

Ստոռած՝ որ միշտ պաշտպան է մտաց լուսաւորութեան հետ լծորդ եղբայրսիրութեան ոգւոյն, պաշտպանեց զհայագգի Հարս՝ այս յետին ցաւալից արկածին մէջ: Երախտապարտ են Ստոռծոյ այն ամէնքը՝ որ հշմարիտ բարեկամ են այս բարեպաշտական ընկերութեան, յորս առաջին կը ստորագրէ ինքզինքը

ՄԱՐԳԱՐԻՏՍ.

Ը

Հոս մոռանալու չեմ յիշելու մասնաւորապէս անդղիացի բարեկամի մը խրախուսիչ խօսքը զոր մատոյց ինձ իւր այցելութեան առթով: Շատ տարիներէ 'ի վեր իւր ուսումնական քննութեանցը պատճառաւ քաղաքս բնակելով, հա-

զիւ թէ ձախորդ լուրը լսեց՝ փութաց մենաստաւ նիս դուռը: Այն ահաւոր հարուածին առջին ապշած՝ իւր մարդասիրական թափին տեղիք տալով,

— Այս անակնունելի հարուածին դարմանը մարդասիրական բարերար ձեռնտութիւնն ընելու է, ըսաւ: Հարկ է ձեզ առհասարակ առ մենուն բարերարութեանը դիմել: Աշխարհածանօթ է ձեր անունն, և ձեր հազարաւոր այցելուք ու բարեկամք անշուշտ իրենց ցաւակցութեան նուէրը պիտի չզլանան. որովհետեւ ձեր աղէտն յառաջողէ՛մ քաղաքականութեան խընդիր է: Մնուշտ նախ ձեր ազգայինք, որոց գործունեայ ներկայացուցիչք էք եւրոպական քաղաքակրթութեան առջին, և որոց կ'իյնայ առաջին պարտքն, զձեզ պիտոր չմոռանան: Բայց մի և նոյն ատեն իմաստութեամբ կը գործէք՝ եւ թէ մեր Անգղիական ազգին բարեկամական ձեռնտութեանը դիմէք: —

Այս ազնիւ յորդորին առջին առ վայր մը մը տախորհ կեցայ, և ապա պատասխանեցի իրեն.

— Տարակոյս չկայ՝ որ այն հազարաւոր Մնուշտիցիք, որ տարուէ տարի յայց կու գան մենաւսմանիս, մեծ համարման ու համակրութեան հաւաստիք կու տան մեզի: Թէպէտ և դէպքս արտաքոյ կարգի է և դառն, բայց չեմ՝ յուսար թէ յաջող հետեանը ունենայ՝ ընդհանուր անդղիական ազգին ձեռնտութեան աղբրս մատուցանելն, վասն զի կաթողիկէ կրօնից դաւանութիւնն մեծ խոչ է յայլակրօնից օգնութիւն գտնելու: —

Այս խօսքիս վրայ բարեկամս զէմքն առ վայր մը նսեմացաւ, և սակաւ մի զգածեալ՝ խօսքս կտրեց, այսպէս.

— Կ'անիրաւիս այդպէս խօսելով, և իմ աղջիկս ոգւոյն ու յառաջադէմ կրթութեանն նախատինք կը դնես, թէպէտ և զիտեմ որ անխաղախ սրտիւ կը խօսիս: Այս ըսեմ քեզի, որ մարդկային կենաց մէջ թշուառութեան առջին՝ ամենայն կիրք, ամենայն տոտերութիւն, ամենայն կարծիք կամ համոզումն, ինչ և իցէ աղբերէ յառաջ գայ՝ կը լռէ, և միայն մարդասիրութեան գութն կը խօսի: Շատ տգէտ, շատ անզգայ ու բիրտ ըլլալու է այն անձն՝ որ մոլեռանդութենէ շարժեալ՝ կրօնական համոզումը պատճառ բռնէ թշուառացելոյ մը բարերար ձեռք մը չերկնցնելու: Անգղիացին որչափ ալ իւր կրօնական համոզմանը վրայ յամառ ըլլայ ու կաթողիկոսեան հակառակորդ, զիտէ միշտ զանազանել կրօնքը մարդասիրութեան պարտքէն: Չեմք այն նախնի անկրթութեան դարերը և ոչ այն բարբարոս ժողովրդոյ մէջ, ուր բռնն մպեռանդութիւնն ոչ միայն անդթութեամբ, այլ և սրոյ կատաղութեամբ կը վարուէր: Կարծեմ շատ իսկ հաւաստիք ունի ձեր ընկերութիւնն հասկընալու՝ թէ ինչպէս արգոյ ու պատուական կը համարի զձեզ նորադանդ անգղիացին: Սոյն բաղմաթիւ ճանապարհորդք՝ որ օր աւուր կ'այցելեն ձեր հոշակաւոր փանաց, զձեզ կը նկատեն իբրև հնաբուն ազգի մը ազնուագոյն ծնունդը, որ իբր արդիւնարար մեղուք

մի միայն նպատակ ձեր ազգային բարիքը կը մտածէք: Ստոյգ կ'ըսեմ որ ձեր ազգատէր և անշահատէր անձնանուիրումը տեսնելով՝ միշտ դարմանք ու պատկառանք զգացած եմ. վասն զի ամենազժուարին և գերազայն ու շատ վսեմ բան կը համարիմ՝ որ մէկն իւր հայրենիքը թողու, իւր ընտանիքէն բաժնուի, ուրանայ իւր ազատութիւնը և ամենայն աշխարհային ազնիւ բաղձանք, և գոյ այս սահմանափակ փոքր կըղզեկիս մէջ ամիւրիկ՝ միայն 'ի սէր հայրենաց, որոյ բարօրութեան համար հանապաղ աշխատի: Եթէ անհատ մ'ըլլայիք՝ անշուշտ աշխարհիս ուշադրութիւնը չէիք զրաւեր. վասն զի եթէ անհատն այսօր է ու կը փայլի, վաղը կ'անցնի և անունն իսկ մոռացութեան մէջ կը նըսեմանայ. սակայն ընկերութիւն մը կը յարատեւէ, և իւր մատուցանելի ծառայութիւնն չի սպառիր: Հնար է թէ առ վայր մը նսեմանայ, բայց ամէն տեսն ընդունակ է իւր ծոցէն այնպիսի անհատներ տալու՝ որ ոչ և իցէ ազգի առջին պարծանք ըլլան: Յորչափ կը տեւէ ընկերութիւն մը ձեզի՛նման, ազգ մը՝ իրաւամբ կրնայ ակնկալել. անոր համար ալ ձեր ազգայինք անշուշտ զձեզ պիտի քաջալերեն և ձեր գոյութեան պատրոյզը վառ պահեն: Ահա ինչպէս կը նկատէ զձեզ Անգղիացի մը, որ կրօնական համոզմամբ ձեզ մէջ կը տարբերի. այլ կրօնական համոզումն աստուածային դատաստանին կը վերաբերի, որոյ արդարութեան դէմ միշտ կ'անիրաւի մղենաւորութիւնն: Ընկերութիւնէ մը միայն յա-

ռաջադիմութեան օգտակար ծառայութիւն պահանջելու է այն աղօղն՝ որ իւր պատիւը և օգուտը կը ձանձնայ: Ուստի դարձեալ խորհուրդս կը կրկնեմ. դիմեցէք մեր անգղիական ազգին, և հաւաստիք կ'ունենաք անոր ձեր վրայ ունեցած համարմանն: —

Ուշի ուշով մտիկ կ'ընէի այս խօսակցութեանս՝ առանց ընդհատելու, բայց մի և նոյն առտն մտօքս կ'ըսէի, թէ քանիք արդեօք կը գրտնուին որ այսպէս վեմ մ աղնիւ սիրտ ունենան, և ամենայն նախապաշարմունքէ ազատ ըլլան. քանիք արդեօք կրնան զանազանութիւն զնել ընդ քաղաքական յառաջադիմութիւն և ընդ կրօնս...: Բայց և այնպէս հարկ էր հետեւել բաւականական խորհրդին:

Թ

Դեռ ևս կը ծխային մեր պարկեշտ մենաստանին աւերակներն, երբ մենք 'ի բռնադատութենէ ստիպեալ՝ նստանք խորհելու: Ինչ լըքման վայրկեան. միանձանց շատք յանակնկալս ըմբռնեալք և կամ պատուականագոյնքն ազատելու զբաղեալք՝ իրենց սենեակներն ամենայն բովանդակածով կորուսած էին: Մենաստանն գրեթէ կիսով չափ հրդեհեալ. աշակերտաց ննջարանն կիսով չափ՝ հանդերձ կահիւք՝ ջնջեալ. մինչև բռնադատել զմեզ առ ժա մանակ մի յապահովել զաշակերտս 'ի գիւղ:

Սրահք և հասարակաց տեղիք՝ ապականեալ կահիւք և աւերածով լցեալ. վնաս մեծ և անպատմելի, որում դարման տանեն 'ի վեր էր քան զմեր կարողութիւն: Ուր փայլէր շնորհք, մաքրութիւն ու կարգ, հիմա ուրիշ բան չէր տեսնուեր, եթէ ոչ ապականութիւն, աղտեղութիւն և աւեր: Ոչ երբեք մտքէս կ'ելլէ այն նսեմութիւնն որ ամենուս երեսը կը տեսնուէր. միայն աստուածային կամաց համակերպութիւնն մեր լքեալ սիրտը կը խրախուսէր: Հարկ 'ի վերայ կար դարման գտնել այն անգութ հարուածին. մեր առաջին յոյսն, մեր առաջին մտածութիւնն՝ առ մեր սիրելի ազգակիցս դիմեց: Եւ որմէն աւելի կրնայինք բարերար ձեռնտուութեան մը օգնութիւն ակնկալել: Կը յիշէինք որ երբ մեր վշտացեալ ու սովեալ հայազգի եղբարք առ մեզ ևս իրենց դողդոջուն ձեռքերը երկնցուցին, 'ի գթոյ և 'ի պարտուց շարժեալ՝ օտարաց գթութիւնը եռանդազին ողբեր էինք: Եթէ մենք մեր ազգակցաց թշուառութեան ձայնին ունկնդիր եղեր էինք, հարկ էր յուսալ թէ և մեր ազգակիցք մեր թշուառութեան ժամուն զմեզ չմոռանային: Ուստի և քաղցր է մեզ յայտնել այսօր մեր շնորհակալքն առ այնս 'ի բարեւէր մերաղնեայց, որոց բարեկամութեան ցոյցք անշնչելի են մեր սրտէն, և որք ձախորդ լուրէն շարժեալ՝ փութացին մխիթարական թղթովք և դրամական օգնութեամբ զմեզ քաջաբերել: Որոց անուններն առանձին առանձին հրատարակելն երկայն ըլլալով խըն

դրենք ընդունել սիրով մեր այս հրապարակական ցոյցը:

Եղան և որ իրենց ցաւակցութեան հաւատ տէրը փութացին տալ մեզ զգածեալ գրովք. ուրոց անուանքը հարկ կը համարիմք հրատարակել՝ իբրեւ 'ի դոյզն փոխարէն իրենց ազնււթեանը: Եւ նախ զնելու եմք եկեղեցակաւնաց զատեն զլսեմափառ Յիրանաւորն Հատուն 'ի Հռովմայ, զՄխիթարեան Հարս 'ի Վիեննայէ և 'ի Թրիեստէ, զԳերալ. Յովսէփ Յէրաշեան 'ի Հռովմայ, և զՏէր Մեսրոպ Ուղուրեան 'ի Լիւփոնոյէ, զԱրգիս քահանայ Պօղոսեան 'ի Ռօմանայ, և զՊօղոս քահանայ Յակովբեան 'ի Պօթուշանայ, զՏ. Կարապետ Խաչերեսի Կոյլաւեան և զԵղ. Պօղոս Ալլահվերաի:

Յախարհականայ կարգէ յիշելու ենք զՊ. Կար. Եղեանց 'ի ռուսաբնակ Հայոց, որոյ բարեկամութեան ցոյցք անպակաս են յՈւխտէս. ըզԳրիգոր Խալովեանց 'ի Մասկոպ, որոյ ազնիւ և զգածեալ գիրը բաղձալի էր ինձ հրատարակել՝ եթէ տեղիս ներէր. զՊ. Պ. Կիւզէլ, զՊ. Յակոբ Տամատ, զՊ. Յովսէփ Խսկէստէր, և զՊ. Մ. Թօթվանեան 'ի Գաղղիոյ: Ապա զԹադւոր Փաշայն, զԺիր և զգործունեայ ազգասէրն 'ի Հայոց Աղեքսանդրիոյ, որոյ բարեաւոր գիրն մըշտատեւ յիշատակ պիտոր մնայ Ուխտիս զիւանը: Ընդ նմին և զՈւէիզեան եղբարս և անոնց ազգատոհմը, որոց անկեղծ բարեկամութիւնն և վաղեմի աշակերտութիւնն զիրենք Ուխտիս որդիս համարել կու տայ, ըստ իրենց ազնիւ յայտ

արարութեան՝ 'ի մեկնել իրենց զգացած ցաւը վանացս աղէտը լսելով: Նմանապէս զՏիկին Յակոբ Արթին պէյ: Չամէանք 'ի Պօլսոյ ոչ յետնորդ մնացին փութալու մեզ 'ի մխիթարութիւն, հաւատարիմ կալով իրենց գերդաստանին հնաւանդ բարեկամութեան առ Միաբանութիւնս: Յիշենք, 'ի մէջ այլոց, և զՊ. Մխիթար Ծաղիկեան 'ի Լիւփոնոյէ. և զՊ. Աղասէր Պոյաճեան 'ի Տրապիզոնէ, զՊ. Սնդրէաս Պինտոն 'ի Զմիւռնիոյ, և զՊ. Գէորգ Զօհրապեան 'ի Լիոնէ, իբր նախկին աշակերտք որպէս և զԶուլպեցի Պ. Թորոս Խաշակեան ազնիւ երիտասարդը, որ 'ի Պօն Գերմանիոյ իւր ուսումնական կրթութիւնը կը շարունակէ: Այլ և 'ի մասնաւորի յեշելու ենք զմեծ ազգասէրն Պ. Յովհան Յարութիւնեան 'ի Ճովայէ, որոյ ազնիւ և անկեղծ բարեկամութեան հաւատովք անպակաս են 'ի Մխիթարեան Ուխտէս: Ընդ նմին և զԲատալիոյ, Սինկափուռի և Սուրարայա ազնուախոհ Հայս:

Այս ամենուն ազնիւ սրտին ըիւր դոհութիւն 'ի մէնջ: Նաեւ անոնց որ արգահատութիւնն ու հին բարեկամութիւնն այս սրտակէզ պաւտահարին առթիւ յայտնած են զրով կամ 'ի բերանոյ առ մի որ կամ առ ոմանս 'ի մերոցն միաբանից, աղաչելով հաղորդել զայնս պարտանապէս առ կեդրոն Միաբանութեանս: Ուրոց համարն արդարեւ բազում է:

Յիշելու ենք նաեւ մեծ երախտագիտութեամբ զնոսս, որ հրատարակեալ յօգուածներով փու

Թացին 'ի նպատտ զալ Ուխտիս. ինչպէս Մշակին խմբագիրը, և զխաւորապէս Պ. Պետրոս Բէպուրեանց, որոյ յօգուածն կ'ապացուցանէ գրողին բարի սիրտը, ազնիւ կըրթութիւնն ու մեծանձնութիւնը: Այսպիսի արդարասէր անձինք ո՛ր և իցէ ազգի պարծանք են, որ իրենց կրթութեամբ և վեհանձն ոգւովն կ'ապացուցանեն թէ յառաջագիմութեան արժանաւոր զաւակունք են, ազատ 'ի նախապաշարմանց:

Ժ

Ազգայինը այսպէս իսկ յօտարաց, թողլով այն թուղթքն որ հասին առ մեզ 'ի Վաղդիոյ, յԱւստրիոյ, 'ի Գերմանիոյ, յողջն իտալիոյ և յԱմերիկոյ, հանդերձ դրամական նուէրներով ինչ, յիշելու ենք մասնաւորապէս շնորհակալու սրտիւ մեծ համակրութեան ցոյցն՝ զոր ետուն մեզ Անգղիացիք:

Եւ նախ մեր վաղեմի բարեկամն Պրայս, որ աղէտը լսածին պէս՝ փութաց գիր գրելու ցաւակցութեան. և ոչ միայն ինքն, այլ և իւր ազնիւ եղբայրն. որ և միաբան թղթաւորութիւն խընդրեցին՝ յանուն Ռւստոյ գրամական հանգաւանկութիւն ընել 'ի դիւրութիւն մեզ: Եւ նոյն իրենց այս առաջարկն թէ՛ լրագրոց մէջ հրատարակեցին և թէ՛ անձամբ գործադրեցին, իրենց ազգայնոց նուէրը մեզ 'ի նպատտ աղերսելով:

Մեր երախտագիտութիւնը մշտապէս պիտի ըլլայ առ Պրայս ազնիւ եղբարս, որ ամէն առթիւ մէջ զանց չըրին երբեք յայտնի ընելու իրենց առ մեր Ռւստոյ ունեցած համակրութիւնը:

Գարձեալ յիշելու ենք զՃօն Ռուբին, այն մեծասիրտ ու հռչակաւոր գրագէտը, որոյ անուանը ամէնանգղիացի պատկառանքը կ'արտաբերէ իբր պարծանք իրենց ազգին, և որոյ շատ յիշատակը կը պահուին վանացոյ գրաստունը: Աղիտիս լուրը լսելով՝ ոչ միայն իւր նուէրը ուղարկեց, այլ և ազնիւ և մեծանձն նամակաւ փութաց զմեզ քաջալերելու, հրաւիրելով միանգամայն երթալ յԱնգղիա, և հոն Վանքէտք անդորր ընել վրայ մենաստան կանգնել: Որովհետեւ ինքն անդորրութիւն ու խաղաղ կեանք սիրելով՝ կը համարի թէ չոգենաւուց արդի յաճախութիւնն և աղմուկն 'ի Վենետիկ, ոչ միայն նոյն մեծագործ քաղաքին վայելչութիւնը կորսնցընել տըւին, այլ և մեր խաղաղամիտ ընկերութեան ոգւոյն խռովիչ են:

Իսկ Սըր Լէյարտ, երբեմն գեսպան Անգղիոյ 'ի Կոստանդնուպօլիս, որ քաղաքս կը բնակի իւր յատուկ պալատան մէջ, ոչ միայն անձամբ մենաստանիս դուռը եկաւ այս առթիւ իւր ցաւակցութիւնը մատուցանելու, այլ և իւր նուէրը շնորհեց յօգնութիւն չինուածոյն:

Թողունք նշանակել և զայլ նշանաւոր անձնա, որ փտակից եղան մեզ: Գտնուեցան և ոմանք որ երկիւղածութեամբ ներումն կը խընդրէին ըսելով. « Չեմ հարուստ, բայց չկարեւ

նալով այս ցաւալի առթիւ մէջ զընտը իմ փոքր նուէրս՝ կը խնդրեմ ներել և ընդունիլ որչափ և փոքր ըլլայ. փափաքելով փոքու իւր մասնաւոր կեց ըլլալ 'ի վերականգնումն ձեր սիրուն մեծ նաստանին, որոյ յիշատակը միշտ սրտիս մէջ կը կրեմ»:

Այս ամենուն նամակներն իբր յիշատակ կը պահուի արդ 'ի դիւանի, յերախտագիտութիւն մերոց յաջորդաց, և 'ի հաւատարմ տնգդիական ազգին առ Մխիթարեան Հարս ունեցած սիրոյն ու համարմանն: Նմանապէս կը պահուին նաև այն բաղմամբիւ լրագիրք՝ որ այս առթիւ Մխիթարայ տան վրայ խօսեցան, և զլիաւորապէս իտալական, անգղիական և ամերիկեան լրագիրք, որ այս ցաւալի լուրն ամէն կտրմտաւ րածեցին:

Սակայն հարկ է 'ի մասնաւորի և դրուատեօք յիշատակել նաև զումանս յԱմերիկացի բարեկամաց մերոց, որք ծանօթանալով ձախորդ լլարոյն, չկամեցան յետնորդ ըլլալ քան զՊրայս ազնիւ եղբարս. այլ փոյթ ըրին մասնաժողով կազմել և հրատարակեալ յօդուածիւ խրախուսել իրենց հայրենակցաց նուէրն 'ի նպատակ Մխիթարեան Հարց. յիշեցրնելով հաղարուտաց այցելութիւնն 'ի դրունս Ս. Ղազարու, և իրենց եղած մարդասէր հիւրընկալութիւնը: Սոցա զլիաւորն է Հանուէր՝ ազնիւ ու քաջ մասնագիրն, որ գոցեա քսան ամօք յառաջ ամերիկեան հիւստէր 'ի Վենետիկ, և այժմ՝ իւր գրաւոր վաստակովք անունն անմահացու-

ցած է, և վանացս համբաւն իւր բաղմամբիւ գրուածներով առ հասարակ Սմերիկացւոց սիրելի ու պատկառելի ըրած է:

Արոնց ամենս ն և նմանեաց, որպէս և Սնգղիոյ Խորհրդարանին երեսփոխանաց ոմանց մեծանունութեան և առատաձեռնութեան՝ Մխիթարեան Ախտն ինքզինքը երախտապարտ միշտ պիտի համարի:

ՀՀ Ազգային գրադարան



NL0240347

